

Հոկտեմբերի 30-31, 2007

Երևան, Հայաստանի Հանրապետություն, «Արմենիա Մարիոթ» հյուրանոց

«Մրցակցության իրախուսումը զարգացած և զարգացող երկրներում» միջազգային համաժողով

Ձեկուցող՝ Գ. Սահակյան

ՀՀ ՏՄՊՊՀ, Իրավաբանական և վարչական վարույթի վարչության

Իրավական ակտերի բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

Ձեկույց

Հարգելի հյուրեր: Կարևորելով նման համաժողովների դերն ու նշանակությունը մեր պրակտիկ գործունեության ընթացքում, սիրով ողջունում են Ձեզ այս համաժողովի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում շուկայական հարաբերություններին անցումը բնորոշող իրավական ակտերի մեջ առանցքային տեղ զբաղեցնող «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2000 թվականի նոյեմբերի 6-ին, որի հիման վրա իր գործունեությունն է իրականացնում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, որի ամենօրյա աշխատանքն ուղղված է այնպիսի պայմանների ստեղծմանը, որ հասարակության լայն շերտերի, ներառյալ շուկայական հարաբերությունների մասնակիցների համար ըմբռնելի լինի բարեխիղճ մրցակցության, և, ընդհանրապես, մրցակցային օրենսդրության դրույթների պահպանման անհրաժեշտությունը:

Եվրոպական և այլ երկրների օրենսդրությունների համանմանությամբ, մեր կողմից ընդունված օրենքում ևս, որպես նպատակ, ամրագրված են չորս առանցքային ուղղություններ, որոնց գործողությանն ուղղված խնդիրների և գործառույթների իրականացումը, հանգեցնում է բարեխիղճ և ազատ մրցակցային միջավայրի ձևավորմանը:

Չենք կարող չփաստել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նկատմամբ ընդհանուր հետաքրքրության ձևավորման համար, բնականաբար, անհրաժեշտ է դրա պահանջների նկատմամբ հասարակության գիտակցված մոտեցումը, և, առավելապես, շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև սպառողների՝ մրցակցությանն ուղղված նպատակամղվածությունը, որը կհանգեցնի օրենքի օրինական կիրառման դաշտի ընդլայնմանը:

Մրցակցության ոլորտում առկա փորձի հիման վրա, մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետությանը, և, դրանով հանդերձ, Հայաստանում տնտեսական քաղաքականության առաջընթացին նպաստելուն են ուղղվել

2007 թվականի փետրվարին օրենքում կատարված լրացումներն ու փոփոխությունները, քանի որ առանց մրցակցության վիճակի բարելավման, անհնար է ակնկալել շուկայական տնտեսության աճի տեմպերի աշխուժացում՝ գիտակցելով, իհարկե, որ մրցակցային օրենսդրության դրույթների մշակումը, համեմատած այն երկրների հետ, որտեղ նման հարաբերությունների կարգավորման և կիրառման երկարատև պրակտիկա կա, անհամեմատ բարդ է:

Մինչև օրենքում լրացումների և փոփոխությունների կատարումը, մանրամասն և հստակ չէին կարգավորվում դրա հիմնական ինստիտուտները, առկա էին հսկասություններ Օրենքի և դրա հետ առնչվող այլ օրենքների և օրենքի հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի միջև:

Զեկույցի շրջանակներում, իհարկե, հնարավոր չէ ամբողջական կերպով ներկայացնել իրականացված օրենսդրական բոլոր բարեփոխումները՝ հաշվի առնելով նաև դրանց՝ բարդ տնտեսագիտական մոտեցումների և վերլուծությունների միջոցով գնահատման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, փորձենք մի քանի կետերով հիշատակել դրանք:

Օրենքում, տնտեսական մրցակցության կարգավորմանն ուղղված՝ տնտեսվարող սուբյեկտների հսկամրցակցային համաձայնություններին, մենաշնորհ կամ գերիշխող դիրքին, համակենտրոնացման հայտարարագրմանը և անբարեխիղճ մրցակցությանը վերաբերող չորս հիմնական ինստիտուտներից փոփոխություն չի կրել միայն վերջինը, սակայն, պետք է փաստել, որ Հանձնաժողովի պրակտիկ գործունեության ընթացքում նկատելի են հենց անբարեխիղճ մրցակցության պահանջների խախտմանն առնչվող գործերը, որոնց, ամենատարբեր լրատվամիջոցներով պարբերաբար լուսաբանման և, ինչու չէ՝ նաև դրանց ապացուցողական պրոցեսի անհամեմատ դյուրինության արդյունքում, շեշտադրվել է դրանց աճը:

Օրենքը լրացվել է ազատ տնտեսական մրցակցությունը խաթարող պետական օժանդակություններին վերաբերող նոր ինստիտուտով: Արգելվում են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը հանգեցնող կամ սպառողների շահերը վնասող պետական օժանդակությունները, բացառությամբ այն օժանդակությունների, որոնք նախատեսված են օրենքով: Օրենսդիրը, որպես բացառություն, թույլատրում է նաև սոցիալական բնույթի հարցերի լուծման, բնական աղետների, այլ բացառիկ դեպքերի հետևանքով առաջացած վնասների հատուցման, ինչպես նաև օրենքով և միջազգային պայմանագրով նախատեսվող պարտականությունների կատարմանն ուղղվող օժանդակությունների տրամադրումը:

Որպես օրենքի խախտումից ձեռնպահ մնալու իրավական երաշխիք՝ նախատեսվում է Հանձնաժողով դիմելու և պետական օժանդակություն տրամադրելու կամ ստանալու վերաբերյալ եզրակացություն ստանալու հնարավորությունը:

Այլ երկրների օրենսդրական գործընթացները հաշվի առնելով, Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկայի բացակայության պայմաններում, լրամշակել ենք նաև հակամրցակցային համաձայնություններին վերաբերող դրույթները: Մանրամասնվել են դրանց դրսևորման ձևերը, սահմանվել են դրանց ապացուցման եղանակները: Տնտեսության զարգացման ներկա պայմաններից ելնելով՝ փորձ է արվել հեշտացնել հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն ու փաստումը, որը կրերի տնտեսվարող սուբյեկտների գործողությունների՝ մրցակցության պաշտպանության մասին օրենքի դրույթների առավել համապատասխանեցմանը:

Փոփոխության են ենթարկվել նաև մենաշնորհի և գերիշխող դիրքին վերաբերող դրույթները. սահմանվել է համատեղ գերիշխման մեխանիզմը: Ըստ օրենքի պահանջի, տնտեսվարող սուբյեկտների կողմից տվյալ ապրանքային շուկայում իրենց գործունեության տնտեսական ցուցանիշների վերաբերյալ Հանձնաժողով վեցամսյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնելու պարտավորության կատարման արդյունքում, Հանձնաժողովին ընձեռնվում է օրենքի պահանջների պահպանման նկատմամբ առավել լայն շրջանակներում վերահսկողություն իրականացնելու, այդ թվում և շեշտադրվող կարևորություն ունեցող հակամրցակցային համաձայնությունները կանխելու և բացահայտելու հնարավորություն:

Օրենքի լրամշակումներով էապես փոխվել են տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների հայտարարագրման պահանջները, ներառյալ հայտարարագրման հիմքերը, որով առավել թափանցիկ և վերահսկելի են դառնում այս հարաբերությունները: Սահմանվել է համակենտրոնացման մասնակիցների կողմից համեմատաբար մեծ ծավալի տեղեկատվության ներկայացման պահանջ, որը Հանձնաժողովին հնարավորություն կտա գնահատել հայտարարագրվող համակենտրոնացման արդյունավետությունը և համակենտրոնացման արդյունքում առաջացող մրցակցության սահմանափակման աստիճանը, որով և շուկայում ազդեցության հնարավոր հետևանքները: Օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կազմում նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ներառումը հիմք ընդունելով՝ օրենսդիրը որպես համակենտրոնացման մասնակից դիտարկում է նաև վերջիններիս՝ նկատի ունենալով առևտրային կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու նրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրորեն

ամրագրված հնարավորությունը, որով և զերծ կմնանք համանման պայմաններում գործող սուբյեկտների համար անհավասար իրավական պայմանների ստեղծումից:

Կարևորում ենք օրենքով նախատեսված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ լիազորությունների, այդ թվում, ստուգման իրավասության վերապահումը Հանձնաժողովին, որը համապատասխան վարույթների գծով հավաստի և լիարժեք տեղեկատվության աղբյուր, ուստի և օբյեկտիվ քննության, և, ընդհանրապես՝ օրենքի դրույթների առավել արդյունավետ իրականացմանը նպաստող հիմք է: Հստակեցվել և մանրամասնվել են նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղեկատվության ներկայացման հետ կապված հարաբերությունները, առանց որի անհնար է պատկերացնել Հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպումը: Այս առումով, կարող ենք փաստել, որ, այսպես կոչված, «առավել հեշտացել են» Հանձնաժողովի և տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունները, որին, իհարկե, վերջին հաշվով, նպաստել են նաև վերջին ամիսների ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացրած՝ տարբեր լրատվամիջոցներով պարզաբանված գործերը:

Շուկայական տնտեսության ներկա պայմաններում, օրենքի պահանջներից բխող գործողությունների չկատարմամբ, այլ տնտեսվարող սուբյեկտների համար խոչընդոտների ստեղծումը հնարավորինս մեղմացնելու համար վերանայվել են նաև օրենքով նախատեսված սանկցիաները, որոնք, կարծում ենք, զսպող միջոց կարող են հանդիսանալ դրա պահանջները խախտող սուբյեկտների համար, որով, վերջիններս, թերևս, զերծ կմնան իրենց ֆինանսապես թուլացնելու վտանգից:

Կարծում ենք, որ օրենքում կատարված այս և այլ փոփոխություններն ու լրացումները հնարավորություն կտան Հանձնաժողովին ավելի արդյունավետ կերպով պայքարել մրցակցությանն առնչվող խախտումների դեմ: Հարկ է նշել նաև, որ օրենքի կիրառման արդյունքները, մեր ունեցած փորձի համադրման հիման վրա, անկասկած, կլինեն մեր ուշադրության ներքո, քանի որ պրակտիկապես իրենց «չարդարացրած» կանոնների սահմանումն ու կիրառումը, շուկայական տնտեսության ներկա պայմաններում, մեղմ ասած, անընդունելի է:

Հասարակության առավել լայն շերտերի համար մրցակցության հարցերի լուսաբանմանն է ուղղված Հանձնաժողովի ամենօրյա գործունեությունը: Հանձնաժողովը, որպես Մրցակցության Միջազգային Ցանցի անդամ, ունի ինտերնետային կայք, որտեղ տեղադրվում են նրա գործունեությանն առնչվող ամենատարբեր նյութեր, այդ թվում՝ Հանձնաժողովի նիստում քննարկվելիք հարցերի, դրանց արդյունքում ընդունված որոշումների, մրցակցությանն առնչվող խնդիրների վերաբերյալ ելույթների, հարցազրույցների, հանդիպումների, սեմինարների վերաբերյալ տեղեկություններ: Ստեղծված է Հանձնաժողովին օպերատիվ կերպով տեղեկատվություն, օրինակ դիմում

կամ բողոք ներկայացնելու հնարավորություն, որով, կփորձենք նպաստել Հանձնաժողովի և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հաղորդակցությանը վերջիններիս կողմից իրենց իրավունքների նկատմամբ առավել հետևողականություն ցուցաբերելու առումով, փաստելով, որ, համատարած խախտումների պայմաններում, Հանձնաժողով ուղղվող դիմումների և բողոքների թիվը, անհամեմատ հեռու է իրական պատկերի արտացոլումից:

Իհարկե, մրցակցային քաղաքականությանն ուղղված Հանձնաժողովի գործունեության իրականացման կարճ ժամանակահատվածում ի հայտ են եկել և ներկայումս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ ու խնդիրներ, որոնց լուծումների հարցում ևս կան լուրջ խոչընդոտներ և դժվարություններ: Դրանցից, օրինակ, նշենք վերջերս տարբեր աղբյուրներով շեշտադրվող տնտեսության ստվերային մասի առկայությունը: Այս առումով, մեր գործառույթներին օժանդակելու իմաստով, բնականաբար, ողջունում և կարևորում ենք պետական մակարդակով իրականացվող և իրականացվելիք համապատասխան միջոցառումների իրականացումը:

Փաստելով, որ Հանձնաժողովի կողմից բացահայտվել ու փաստվել են օրենքի որոշ խախտումներ, որոնք, անկասկած, դրական են ազդում մրցակցության վիճակի վրա, բայց այն տեսանկյունից, որ մեր նպատակը տնտեսվարող սուբյեկտների համար անցանկալի հետևանքների առաջացումը չէ, այլ հնարավոր խախտումների նախազգուշացումը և կանխարգելումը՝ շուկայի վրա բացասական ազդեցությունները մեղմելու և (կամ) բացառելու համար, խնդիրներն, իհարկե, շատ են: Օրինակ, փաստ է, որ Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում, կարելի է ասել, պրակտիկապես չի առնչվել հայտարարագրման դեպքերի հետ, որի պատճառներն, իհարկե, տարբեր են: Դրանցից են, մասնավորապես՝ նախկինում գործող օրենսդրական դրույթների ոչ հստակ լինելը, դրանց հայտնաբերմանն ուղղված վերլուծական-տեղեկատվական պատշաճ բազայի բացակայությունը, տնտեսվարող սուբյեկտների չտեղեկացվածությունը, իսկ տեղեկացվածության դեպքում նաև՝ օրենքի պահանջից գիտակցված և չգիտակցված խուսափումը:

Հարկ է նշել նաև, որ լիարժեք և ամբողջական վերլուծական-տեղեկատվական բազա չունենալու հանգամանքն իր ազդեցությունն է ունեցել նաև Հանձնաժողովի ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացի վրա, քանի որ դրա բացակայության պայմաններում, իհարկե, հնարավոր չէր մանրամասն օրենսդրական կարգավորման ենթարկել օրենքից բխող ենթաօրենսդրական դաշտը, որն էլ հանգեցրեց դրա, այսպես կոչված, «կոպիտ» կարգավորմանը:

Այս և այլ խնդիրների լուծման, մրցակցության ոլորտի փորձի փոխանակման ու պրակտիկ աշխատանքում դրանց կիրառման նպատակով, Հանձնաժողովն, իր

գործունեության ընթացքում, համագործակցել և համագործակցում է համանման և այլ մարմինների հետ: Այն տնտեսական մրցակցության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվելու է նաև առաջիկայում՝ ինչպես միջազգային կազմակերպությունների, այնպես էլ արտերկրի համանման մարմինների հետ: Պետք է փաստել, սակայն, որ բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի և առողջ շուկայի ձևավորման և պահպանման խնդիրն ավելի զլորալ է, քան սոսկ որպես շուկայի կարգավորմամբ զբաղվող պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների լիազորությունների սահմաններում իրականացվող գործառույթ: Կարծում ենք, որ մրցակցության պաշտպանությանն ուղղված Հանձնաժողովի գործողություններն, ի վերջո, կարող են ապահովել համարժեք արդյունավետություն մրցակցային կուլտուրայի ձևավորման հարցում իրավագիտակցության բարձրացման պարագայում միայն: Հանձնաժողովն, իր լիազորությունների սահմաններում, նաև այս կոնֆերանսի շրջանակներում հնչեցրած առաջարկությունների հիման վրա այսուհետև ևս կշարունակի նպաստել շուկայում բարեխիղճ և ազատ տնտեսական մրցակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ու պահպանմանը:

Շնորհակալ եմ ուշադրության համար: